Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի  Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Տ Ա Վ ՈՒ Շ Ի  Մ Ա Ր Զ

# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն 2

Մ Ա Ր Զ Ի  Խ Ո Ր Հ Ր Դ Ի  Ն Ի Ս Տ Ի

21.06.2022թ.

Քաջարան

**2022 թվականի հունիսի 21 -ին ժամը 17 $^{00}$ ին կայացած**

**ՀՀ Տավուշի մարզի խորհրդի նիստ**

1. **Օրակարգի հաստատում**

**2. ՀՀ Տավուշի մարզում սուբվենցիոն ծրագրերի իրականացման նպատակով 2022թվականին ներկայացված հայտերի մասին**

Զեկուցող ՝ Մ .Մելքումյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ

**3. ՀՀ Տավուշի մարզի համայնքների տեղական բյուջեների սեփական եկամուտների կատարողականի ընթացքը 2022 թվականի հունիսի 1-ի դրությամբ**

Զեկուցող՝ Ա. Բաբլումյան- ՀՀ Տավուշի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի պարտականությունները կատարող

**4. Գյուղատնտեսական աշխատանքների ընթացքը , մթերման շրջանի համար կատարվող նախապատրաստական աշխատանքները**

*Զեկուցող՝ Վ. Սուքոյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ*

**5. Այլ հարցեր**

Ներկա էին մարզի խորհրդի բոլոր անդամները:

Մասնակցում էին մարզպետի տեղակալը, մարզպետարանի գլխավոր քարտուղարը, մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարները:

Հրավիրված էին մարզի ուժային կառույցների ղեկավարները :

## 2. ՀՀ Տավուշի մարզում սուբվենցիոն ծրագրերի իրականացման նպատակով 2022թվականին ներկայացված հայտերի մասին

---

*Զեկուցող՝ Մ. Մելքումյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետի պարտականությունները կատարող*

*Զեկուցողը նշեց,* 2022թ. Տավուշի մարզի 4 համայնքներից մարզպետարան է ներկայացվել թվով 21 սուբվենցիոն ծրագրի նախնական հայտեր 4,7մլրդ. դրամ արժեքով:

Հայտերը լրամշակվել են և թվով 16 ծրագրի ամբողջական փաթեթները ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, որոնք ներկայումս ուսումնասիրվում են միջգերատեսչական հանձնաժողովի կողմից և գտնվում են տարբեր փուլերում:

Բոլոր ծրագրերից 2-ը վերաբերում են **մանկապարտեզների կառուցմանը և վերանորոգմանը**, **որոնք տարբեր պատճառներով 2022թ-ին չեն իրականանա:** 4-ը վերաբերում է **ոռոգման և խմելու ջրամատակարարման** համակարգերի հիմնանորոգմանը, կամ նոր համակարգերի կառուցմանը, որը կհամաֆինանսավորվի **Հովնանյան հիմնադրամի կողմից**, 7 ծրագիր՝ փողոցների ասֆալտապատմանը և սալապատմանը, 1-ը՝ ԲԲԾ-ի էներգաարդյունավետ արդիականացմանը **/2022թ.-չի իրականանա, ֆինանսական միջոցների սղության պատճառով/**, 1-ը՝ տեխնիկայի ձեռքբերմանը, 2-ը վերաբերվում է գիշերային լուսավորության ցանցի

կառուցմանը, 2-ը՝ մշակույթի տների վերանորոգմանը, 1-ը՝ պուրակների բարեկարգմանը և կառուցմանը, 1-ը գեղարվեստի մանկական դպրոցի վերանորոգմանը:

**Հանձնարարվեց՝ համայնքների կողմից 2023 թվականի սուբվենցիայի նախնական հայտերը և տեխնիկական բնութագրերը ներկայացնել մինչև 2022 թվականի հուլիսի 10-ը: Ամբողջական փաթեթների ներկայացման վերջնաժամկետ է համարվում ս/թ նոյեմբերի 25-ը :**

## 3. ՀՀ Տավուշի մարզի համայնքների տեղական բյուջեների սեփական եկամուտների կատարողականի ընթացքը 2022 թվականի հունիսի 1-ի դրությամբ

---

*Զեկուցող՝* Ա. Բաբլումյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի պարտականությունները կատարող

Զեկուցողը նշեց. մարզի 4 համայնքի 2022 թ. տեղական բյուջեների տարեկան նախատեսված եկամուտների հանրագումարը կազմում է 5 մլրդ 628 մլն 467 հազ դրամ, **որից սեփական եկամուտները՝ 1 մլրդ 506 մլն դրամ,** որը կազմում է ընդհանուր գումարի 26.8 %-ը, ՀՀ պետական բյուջեից տրամադրվող պաշտոնական դրամաշնորհները կազմում են 4 մլրդ 122 մլն 475 հազ դրամ (73.2 %), այդ թվում դոտացիան՝ 3 մլրդ 768 մլն 352 հազ դրամ (67.0 %), սուբվենցիա՝ 325 մլն դրամ (5.8 %), այլ տրանսֆերտներ՝ 29 մլն դրամ (0.5 %):

2022 թվականի հունիսի 1-ի դրությամբ սեփական եկամուտների հավաքագրումը կազմել է 505 մլն 599 հազ դրամ կամ 69.5 % 1-ին կիսամյակի նախատեսվածի նկատմամբ և 33.6 % տարեկան նախատեսվածի նկատմամբ:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ սեփական եկամուտներն ավել են հավաքագրվել 48 մլն 425 հազ դրամով:

Առանձնակի նշվեց սեփական եկամուտների կատարողականները առանձին եկամտատեսակների ՝ անշարժ գույքի հարկի, փոխադրամիջոցների համար գույքահարկի, տեղական տուրքերի, գույքի վարձակալությունից եկամուտների և տեղական վճարների մասով, ս/թ հունիսի 1-ի դրությամբ:

ՀՀ Տավուշի մարզպետի 20.06.2022թ. թիվ 185-Ա որոշմամբ հաստատվել է սահմանամերձ համայնքների հողի հարկի փոխհատուցման գումարն ըստ համայնքների և բնակավայրերի (60.0 մլն. դրամ): Համայնքների հետ հողի հարկի փոխհատուցման հատկացման պայմանագրերի կնքումից հետո նախատեսված գումարի 1-ին չափաբաժինը (30.0 մլն. դրամ) անմիջապես կփոխանցվի համայնքների հողի հարկի հաշվեհամարներին: 2-րդ չափաբաժինը համայնքներին կփոխանցվի 1-ին չափաբաժնի գումարները հողի հարկի սեփականատերերի անհատական հաշիվներին մուտքագրելուց հետո:

***Հանձնարարվեց՝ ծանուցագրերի միջոցով իրազեկել բնակիչներին իրենց հարկային պարտավորությունների մասին և հեղևողական աշխատանքներ տանել գանձումների ուղղությամբ:***

## 4. Գյուղատնտեսական աշխատանքների ընթացքը, մթերման շրջանի համար կատարվող նախապատրաստման աշխատանքները

---

Զեկուցող՝ Վ.Սուքոյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի գյուղատնտեսության բնապահպանության վարչության պետ

Զեկուցողը նշեց, որ մարզի գյուղատնտեսական նշանակության հողատեսքերը ըստ հողային հաշվեկշռի կազմում են 110675,7 հա, որից՝ վարելահող -25495,6 հա, բազմամյա տնկարկներ – 1967.9հա, այդ թվում՝ խաղողի այգիներ -1194.9 հա, պտղատու այգիներ – 773 հա, խոտհարքներ - 9400.8 հա, արոտավայրեր- 63013.4 հա, այլ 10798 հա:

Նախնական հաշվարկներով 2022թ.ցանքատարածությունները կարող են գերազանցել 2021թ.ցուցանիշը /5073 հա/ շուրջ 100 հա-ով: 2022թ.գարնանը մարզի 34 բնակավայրերում հիմնվել է 186.2 հա պտղատու այգի /թուզ, արքայանարինջ, ընկույզ, կեռաս,խնձոր,սալոր և այլն/:

Մարզպետարանի հետ համագործակցության արդյունքում ՀիմնաՏավուշ զարգացման հիմնադրամի կողմից մարզի 22 բնակավայրերի հողօգտագործողներին տրամադրվել է շուրջ 40000 հատ տարբեր պտղատեսակների տնկիներ:

Ներկրվել և մարզի 35 բնակավայրերի 578 հողօգտագործողներին տրամադրվել է 169.9 տոննա ազոտական պարարտանյութ, որից 41.95 տոննան՝ ռուսական արտադրության: 50 կգ-անոց 1 պարկը հողօգտագործողին վաճառվել է 12000 դրամով:

Գյուղամերձ տարածքներում արդեն սկսվել են խոտհնձի աշխատանքները,իսկ արտհունձը կսկսվի առաջիկա շաբաթում:

Մարզի մթերող կազմակերպությունների կողմից սկսվել են վայրաճ հատապտուղների մթերման աշխատանքները: Ընթացքի մեջ են խաղող արտադրողների և մթերող կազմակերպությունների միջև պայմանագրերի կնքման աշխատանքները: Օրերս մարզպետի և կազմակերպությունների ղեկավարների հետ քննարկվեցին մթերման աշխատանքների նախապատրաստման, պետական աջակցության ծրագրերից օգտվելու հետ կապված խնդիրներ: Նախնական տվյալներով 2022թ.կմթերվի շուրջ 7200 տոննա խաղող:

2022թ. հունիսի 10-ին մարզի Իջևան համայնքի Ակնաղբյուր և Դիտավան, իսկ հունիսի 15-ին Բերդ համայնքի Չինչին բնակավայրերում տեղացած կարկտահարությունից, ուժեղ քամիներից և հորդառատ անձրևներից գյուղատնտեսական մշակաբույսերին հասցված վնասների չափը ուսումնասիրվում է համայնքային հանձնաժողովների կողմից, որից հետո մեր կողմից եզրակացությունը սահմանված կարգով կներկայացվի ՀՀ ԱԻ նախարարություն:

***Հանձնարարվեց՝ համապատասխան մասնագետների միջոցով խոշորացված համայքների բնակիչներին տեղեկացնել նաև ,,Կարմիր խաչի ,, միջազգային կազմակերպության միջոցով իրականացվող նոր ծրագրերի վերաբերյալ :Հատուկ ուշադրություն դարձնել մթերման կազմակերպչական աշխատանքների տեմպերին:***

## 5. Այլ հարցեր

ՀՀ Տավուշի մարզպետարանի առողջապահության և սոցիալական վարչության պետ Ռ. Տիգրանյանը ներկայացրեց մարզում համավարակի նոր ալիքի կանխարգելման նպատակով պատվաստանյութի 3-րդ չափաբաժնի պատվաստումներն իրականացնելու վերաբերյալ տեղեկատվություն:

ՄԱՐԶՊԵՏ Հ. ՂԱԼՈՒՄՅԱՆ

24.06.2022

X

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ